

ԱԿԱՆԱ. ԸՆԹԵՐՑՈՂԻ  
Գ-Ր ԱԿԴԱՐԱՆ

ՍԻՐԱՍ

ԹԱԼԻՍՄԱՆ

891.99  
U-55

Պատմական Հրատարակչութեան  
Ձերեւուն

-6 NOV 2011

ԱՆԴՐԻԱՆ ԲԵՆԹՈՎՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

891.99

Ա-55

39999

ՍԻՐԱՍ

# ԹԱԼԻՍՄԱՆ



Պատ. Խմբ. [REDACTED]  
Տեխ. Խմբ. [REDACTED]  
Սրբագրիչ՝ Հ. Դոլովիսանյան



ԴԼԱՎԵԼԻՄԸ ԼՎԱՊՈՐ Կ-1093, պատվեր 524  
Հրատ. 3696, տիրաժ 3000  
Պետհատի տպարան  
Ցեղեկան, II Գնունի, 4



Հանձնված ե արտադրության 10 ապրիլի 1936 թ.  
Ստորագրված ե տպելու 19 մայիսի 1936 թ.

ԳԻՆԸ ԲՅ ԿՈԹ.

СИРАС  
ТАЛИСМАН

Гиз ССР Армении, Эреванъ, 1986

Ս Ի Ւ Ա Ս

Ծնվել է 1902 թվին, Երզրումի վելայեթի Ալաշ-  
կերտի չըջանի Գարա—քիլիսե գյուղաքաղաքում։ 1914  
թվին, համաշխարհային պատերազմի հետևանքով ըն-  
տանիքի հետ գաղթել է Կովկաս, հաստատվել Թիֆլի-  
սում և 1915 թվից մինչև 1922 թիվը զբաղվել է գրա-  
սրությամբ։ 1921 թվին գալիս է Յերևան, առաջ է  
քաշվում մի շարք խորհրդային—կուսակցական պաշ-  
տոնների (Յերևանի Գալքաղուսվար, Ախտայի Կուս-  
ալկոոմի քարտուղար, «Բանվոր» թերթի խմբագիր և  
այլն), բայց իր հիմնական աշխատանքն համարելով  
գրականությունը, վերջին շրջանում ամբողջովին նը-  
միրվում է գրականությանը։

Ակդրնական կրթությունն ստացել է Գարա—քիլի-  
սեյում գործող Միացյալ Հնկերության պարոցում, ա-  
պա Յերևանի Պետհամալսարանում և 1929—1932 թ. թ.  
սովորում և ավարտում է Սոսկվայի Համամիութենա-  
կան կոմունիստական Ժուռնալստական ինստիտուտը։

Սիրասի առաջին պատմվածքը՝ «Յեռացող կաթ-  
սան» լույս է տեսել 1922 թ., Յերևանում, Աղաս Վրշ-  
տունու խմբագրությամբ լույս տեսնող «Մուրճ» ամ-

սագրում : Այնուհետև Սիրասը գրում ե «Եվերը», «Կյանքի կարոտը», «Գարնան ծաղիկներ» պատմվածքները : Սիրասն զրադշում ե ժողովրդական բանահյուսության մշտիմամբ, վորի արդյունքն են «Մամեն ու Աչեն», «Լաթիֆե»-ն և այլն :

Սիրասը վիպագիր ե : 1931 թվին լույս տեսավ «Հարցրեք նրանց» վեպը, իսկ 1936 թ. «Զգրված որենք» մեծածավալ վեպը :

## ԹԱԼԻՍՄԱՆ

Ա

Սա վոչ խաս կուզեր ու վոչ ել զումաշ,  
վոչ արբեշում ու վոչ ել թանթելա . նրա ու-  
զածը մի շատ հասարակ բան եր— մի չթե շա-  
պիկ ու մի քաթանե գողնոց . այսքանը բավա-  
կան եր, վոր Արուսը ծածկեր իր յերկու տա-  
րեկան Արմիկի մերկությունը : Յեկ այսոր,  
այդ խոստանում եյին նրան . խոստացողը ինքը  
Բարելն եր, Բարելը, վոր այնքան անունի  
տեր եր գյուղի մեջ, Բարելը, վորի շվաքն ան-  
գամ սարսափի եր ազդում գեղականների վրա:  
Յեկ խոստումը տեղի ունեցավ շատ հասա-  
րակ ձևով...

...Արուսի ամուսինը, Մուկուչը Բարելի  
տան մշտին եր . մեկ որ Մուկուչը գիշերը տուն  
չեկավ : Արուսը մինչև լույս իր Արմիկը գիրկն  
առած սպասեց ամուսնու ճամբան, բայց ա-  
մուսինը չեկավ ու չեկավ... Հազար ու մի մըտ-

քեր անցան Արուսի գլխով, հաղար չար ու բարի դեպքեր նախագուշակեց՝ հա հիմի կզա Մուկուչը, հա քիչ հետո, հա լուսադեմին, հա արեի շողերի հետ. բայց Մուկուչը չկար: Ել Արուսը համբերել չեր կարող, հենց վոր արեւ մի քիչ բարձրացավ, յելավ, փակեց իր դետնափոր տան դուռը, գիրին առավ Արմիկին և ուղղակի դիմեց Բարելի տունը: Գնաց դողալով ու սրտի թթոսոցով, զնաց հեալով ու քրթմնջալով, բայց ինչ լավ եր, վոր բախտը յերես չեր թեքել Արուսից. հենց Բարելի բակում նա հանդիպեց ամուսնուն, վոր գոմից անսառնների աղբն եր փոխադրում. Արուսը չհամբերեց և հենց տեղն ու տեղը սկսեց կըշ տամբել ամուսնուն.

— Յանի ես ել գո՞րծ ա, Մուկուչ, վոր դու անում ես. քանի կար մթնով իր տուն դալի, խեղճ ըրեխիս աչքը ջուր եր դառնում՝ հա դը ռան ճղքանը մտիկ անելով, հա ապի, ապի ձեն տալով, հմի եղ բոլ չի քշերներն ել ոկը սեցիր տուն չգալ. յանի ես ել որութե՞ն ա: Ասոված կտրի եսպիսի որը:

— Ա կնիկ, դու ել բան ես ասում ելի, — սրտնեղելով ասաց Մուկուչը, — յանի յես շատ եմ ուզում, վոր եղպես ըլի. ես անտերի գործին պրծում չկա. սաղ քշերն ես ա ելել իմ հալը, — ասաց, փնչաց Մուկուչը, սրբեց ճառ կատի քրտինքը, ապա ձեռքը տարավ թեթե-

վակի դիպցրեց Արմիկի այտերին: Յերեխան ժպտաց, ժպտաց ու թռչունի նման յերկու թերը թափահարեց գեպի հայրը, սակայն այդ շարժումից ընկավ նրա ուսերին փաթաթված չորը, յերեխայի մերկ մարմինը մնաց առավոտյան քամու սառը շոյանքի տակի:

Արուսը շտապով ծածկեց շորը յերեխայի ուսերին ու այս անզամ ավելի բարկացած առավ.

— Եղ աշխատելն աշխատել, մեջը մի խեր ել ա ըլի, ելի բան ա. բա յե՞րբ պիտի իմ յերեխեն ել մի լազաթին շոր ունենա, հը... .

Ու դեռ յերկար գանգատվում եր Արուսը. .

Այդ խոսակցությունը լսեց Բարելը, վոր աննկատելի հետեւ եր նրանց: Այժմ նա յերելաց: Մուկուչը տեսնելով նրան, շտապով կողովն ուղղեց մեջքին ու տարավ լցրեց բասմայի վրա: Բարելը նախ ուզում եր բարկանալ, վոր Մուկուչն այնքան յերկար խոսակցության ե բռնիւթել կնոջ հետ, բայց յերբ առաջ անցավ, տեսավ, մոտիկից տեսավ Արուսին միտքը փոխեց... Յեվ վոնց չփոխեր միտքը... Արուսը, յանի գյուղի են լավ, լավ հարաներից են վո՞ր մեկն եր, վոր ուներ Արուսի աչքն ու ունքը, վո՞ր մեկն ուներ են բոլորակ յերեսը, են մանրիկ բերանն ու փղոսկրե ծնոտը... Բարելը մոտեցավ, մոտից նայեց Արուսին ու նրա Արմիկին և մտքում ինքն իր վրա

բարկացավ... Եղ վո՞նց, Եղ վո՞նց ինքը մինչեւ  
Հիմի չի իմացել, վոր Մուկուչը՝ Եղ տիմար  
մշակը եղակսի կին ե ունեցել, հա՛, հիմի յե  
հասկանում Բաբելը, թե ինչու յե Մուկուչը  
դործից հետո ենպես վազեվագ տուն գնում,  
հիմի յե հասկանում, թե ինչի մեկ մեկ Մու-  
կուչը կանգնում ե ու հոգոց հանելով նայում  
գեպի հեռու... .

Ու Բաբելը հանկարծ բարի դեմք ե ընդու-  
նում... և իր բակում, գոմի կողքի փոքրիկ  
քողարիկը տրամադրում ե ամուսիններին:  
Մուկուչն իր մշակությունը կանի, Արուսն ել  
կով կկթի և նրանք ուրախ ու յերջանիկ կապ-  
րեն:

— Ես տղեն ել շատ դուրս յեկավ, — ա-  
սում ե Բաբելը և շոյելով յերեխայի գլուխին  
ավելացնում, — Հլա տես թե իրիկունը քաղա-  
քից նրա համար ինչ եմ բերում:

Յեկ այնուհետեւ Բաբելը Մուկուչին դաշտ  
աշխատանքի յե ուղարկում, ու ինքն ել գնում  
քաղաք...

...Այժմ արդեն յերեկո յե: Արուսն սպա-  
սում ե Բաբելին: Հիմա նա կդա: Արուսը յե-  
րեխան գրկին, մինչեւ ծնկները բաց վոտքե-  
րով՝ բասման ե կոխկրառում. նա անդործ  
մնալ չի սիրում: Մեկ բասման ե կոխկրառում,  
մեկ ել կրծքին սեղմում Արմիկին ու ինչ վոր  
չափ ու ձեւ անում, — ահա՛, շապիկն ենպես

կկարեմ, վոր մինչեւ յերեխայի ծնկները ծած-  
կի. գոգնոցն ել միշտ չեմ հագցնի, վոր շուտ  
չմաշի... Ելի աշխարհից բարին անպակաս ե,  
Ելի լավ մարդիկ կան. վո՞նց Արուսը մինչեւ  
հիմի չեր մտածել գալ Բաբելին խնդիրք անե-  
լու, վո՞նց...

Ու կոխկրառում ե Արուսը բասման այն-  
քան ժամանակ, մինչեւ բասման պնդանում ե  
վոտքերի տակ ու նա այս անդամ կարծես  
պար ե գալիս ու քթի տակ ինչ վոր մոլուսմ,  
մեկ-մեկ ել խնամքով շոշափում ե Արմիկի  
մեջքն ու մտմտում, — շուտով շուտով Արմիկն  
զգեստ կունենա: Բայց ինչո՞ւ յե Բաբելն ու-  
շանում. չինի մոռացավ Արուսին ու Արմի-  
կին. չինի մոռացավ իր խոստումը... Զե՛, չե՛,  
Բաբելը վոչ Արուսին ե մոռացել, վոչ ել իր  
խոստումը: Ահա՛, նա յեկավ և հանդարս  
քայլերով մոտենում ե Արուսին: Բաբելն յու-  
րովի ինչ վոր բան ե փափսում և աչքերում  
հուրհատին ե տալիս մի նշանակալից փայլ:  
Բաբելն ավելի յե մոտենում, նայում ե Արու-  
սի բոլորակ ու պայծառ դեմքին, ժպտուն աչ-  
քերին, բարակ վարդագույն շրթունքներին և  
ապա հայացքն իջեցնում վար, նայում ե նրա  
որունքներին, վորոնք չնայած շաղաղված են  
ցեխով, բայց դարձյալ ինչ վոր հուզիչ բան  
ունեն իրենց մեջ: Զե վոր Բաբելը, լավ, շատ  
լավ գիտե, վոր այդ ցեխն անցողիկ ե, վոր

այդ ցեխի տակ թագնված եւ մարմնի գայթակղիչ ճերմակությունը։ Բավական եւ, վոր Արուսը թեկուզ մի անգամ վոտքերը հենց գյուղի ներքեռամ հոսող առվակում ողողի...

Յեվ ավելի ու ավելի յեւ տարվում Բարելն Արուսի հրապույրով. նա հանդարտ քայլերով մոտենում եւ, նախ ձեռքը յերկարում քըսում եւ Արմիկի այտերին։ Յերեխան ժպտում եւ մոր դեմքն ի վեր և արևի հանդչող շողերով պայծառազարդված նրա դեմքը փայլում եւ մի անբռնազատելի հրապույրով։ Արուսը սակայն շփոթված եւ, նա ամենորյա խանդաշատանքով չի կարողանում պատասխանել յերեխայի ժպտին, մանավանդ, վոր այդ պահին Բարելի ձեռքն իրու թե անզգուշաբար դիպչում ենաև Արուսի դեմքին։ Արուսը վատ նախազգացումով ցնցվում եւ, բայց այդ բովելին Բարելն իր լայն գրանից մի կապոց հանելով զնում եւ Արուսի թեկի տակ։ Արուսը ցանկանում է ժպտալ, յերախտապարտ նայել Բարելին, բայց չի կարող, նույնիսկ քնազդորեն հետ-հետ եւ զնում ու կարոտով Արմիկին սեղմում կրծքին։ Զարմանալի յեւ, այդ պահին նա այնքա՞ն եւ ուզում մենակ մնալ իր Արմիկի հետ, վոր հազիվ լսում եւ Բարելի նշանակալից փափսոցը։

— Իրիկունը կըաս իմ ողան, յերեխիր հետոդ կըերես, կըաս, վոր վոտքերս լվանս։

բ

Նա վոչ խաս կուզեր, ու վոչ ել զումաշ, վոչ աբրեշում ու վոչ ել թանթելա. նրա ուղածը մի շատ հասարակ բան եր, մի չթե շապիկ ու մի քաթանե գոզնոց։ Յեվ Արուսի յերեխան, Արմիկն, հիմա ուներ այդ շապիկն ու գոզնոցը։

Բայց Արուսն ապերախտ չեւ պետք եւ մի բանով հատուցել Բարելին այդ լավության համար։ Ի՞նչ եւ Բարելի պահանջը. շատ հասարակ բան. զնալ ու լվալ նրա վոտքերը։ Յեվ Արուսը նախ իր վոտքերն եւ լվանում, կարգի բերում իր հնամաշ դեյրան, ապա մի յերկու անգամ չափ ու ձեւ անում Արմիկի հագուստները, հետո գրկում եւ յերեխային, պինդ սեղմում կրծքին ու զնում Բարելի ողան։ Դուրսը գեռ լույս կա։ Շուտով, շուտով կլվա Բարելի վոտքերը, տուն կվերազանա ու կսպասի եր Մուկուչին։ Ախ, այդ Մուկուչը բնավ լույսով տուն չի գալիս։

Գնում եւ Արուսը բակի միջով, գնում եւ որտի թրթոցով, գնում եւ ներքին հուզումով։ Ինչպես լվանա աղա Բարելի վոտքերը,

վոր նա գոհ մնա, վոր աչքը քաղցր լինի եր  
ու իր մինուճար Արմիկի վրա. զնում ե Արու  
սը և արդեն հասնում ե աղայի ընդարձակ  
տանը: Այստեղ հիմա վոչ վոք չկա. Բարելը  
տնեցիներին բոլորին ուղարկել ե զով սարե-  
րը. ինքը մեկ-մեկ զալիս ե տանն աչք տալու.  
ու այս քանի որս մենակ ե: Հա՛, հիմի յե հաս-  
կանում Արուսը, թե ինչի յե Բարելն ուզում,  
վոր ինքը լվանա նրա վոտքերը, չե, վոր տա-  
նը մարդ չկա. նա ել հալիվոր մարդ. ավտաս  
հիսունի մոտ լինի, ի՞նչ կա վոր Արուսը մի  
անդամ նրա վոտքերը լվա... Ու այս մտքեց  
որտապնդված գնում ե Արուսը, մտնում ե առ-  
դա Բարելի ոդան: Մտնում ե ու յերեխան դը-  
նում հատակին: Հենց ողայում յեղած տաշ-  
տի մեջ ջուր ե լցնում և ապա մոտենալով  
թախտի վրա փափուկ բարձերին թիկնած Բա-  
րելին ուզում ե հանի նրա գուլպաները:

Բայց հենց, վոր ձեռքերը դիպչում են Բա-  
րելի վոտքերին, Բարելն ուղղվում ե տեղում  
և բռնում ե Արուսի բազուկից, բռնում ե ու  
պինդ քաշելով նստեցնում ե իր կողքը, թախ-  
տին.

— Հլա մի քիչ կաց, — ասում է Բարելն ու  
թումած վավաշոտ ձեռքերը քում ե Արուսի  
այտերին:

— Ես ի՞նչ մախմուր թշեր ունես. ես ի՞նչ

աչքեր են. ասես գունյա գյողալի յերեսհարքն  
ըլի:

Արուսն ամոթխած դեմքին ե քաշում գըլ-  
խաշորը, բայց Բարելը հանդիստ չի տալիս:  
— Չե՛, — շարունակում ե նա, — չե՛, մեղք  
ո մեղք, վոր ես պայծառ, ես ջահել ումբըն  
եսպես խեղճ ու աղքատ մնա:

Ու Բարելն ելի իսոսում ե, ելի համոզում,  
վոր Արուսին հարկավոր ե լավ կյանք, լավ  
ապրուստ: Բարելը կհեշտացնի նաև Մուկուչի  
աշխատանքը. միայն թե Արուսը Բարելի ղա-  
դրըն իմանա, Բարելի սրտով շարժվի: Ու ա-  
վելի վճռական են շարժվում Բարելի ձեռքե-  
րը. նա տեղից բարձրանում ե, Արուսին գըր-  
կում, զցում ե թախտին: Արուսը դիմադրում  
ե ու կարոտալի հայացքը միշտ հառած ե պա-  
հում յերեխայի վրա. յերեխան դեռ ժպտում  
է. բայց տեսնելով, վոր մայրը իրան չի մո-  
տենում նախ ծամածում ե դեմքը, ապա ըսկ-  
ում ե ճչալ բարձր ու աղմկոտ... ճչում ե ամ-  
բողջ կոկորդով և ճիչը լցվում ե սենյակում,  
ապա գնում տարածվում ե բակում և դեռ ա-  
վելի հեռուն: Բարելը կատաղում ե. յերե-  
խայի լացը շփոթում ե նրան: Սակայն յերե-  
խայի ծիչն ուժ ե տալիս Արուսին. նա թախ-  
տից բարձրանում ե, բայց լեզուն չի զորում  
վոչ մի խոսք ասելու: Բարելն ատելու-  
թյամբ լցվում ե դեպի յերեխան, ուզում ե՝ Ա-

բուսին թողնել, վոր նա զնա յերեխայի ձայ-  
նը կտրի, բայց չի ուզում հրաժարվել իր մըո-  
քից... Ու մի վերջին ճիգով նորից Արուսին  
սեղմում ե իր բազուկներում:

Յերեխան շարունակում ե աղմկել:

Լսվում ե վոտքերի թփթփոց:

«Ա՛յ շան լակոտ, այնքան դռոաց, վոր՝ մար-  
դիկ վրա հասան»... Ու բարելը հուսահատ  
թողնում ե Արուսին. Արուսը թոխչքով հաս-  
նում ե, դրկում յերեխային ու ցատկում ե զե-  
պի դուռը՝ բացում ե այն ու դուռն շեմքին  
հանդիպում ե Մուկուչին, վոր նոր ե վերա-  
դարձել աշխատանքից: Արուսը չփոթված ե,  
բայց բարելն իր բանը գիտե, տեսնելով Մու-  
կուչին ընդունում ե հպարտ դեմք և հան-  
դարտորեն ասում.

— Ապրես վորդիս. քանի՞ որ եր վոտքերու  
չեյի լվացել. եղպես մեկմեկ արի լվա...

Գ

Արմիկը չթե շապիկ ունի ու քաթանե գող-  
նոց, Արուսն հիմա գիտե, թե ինչու համար  
Արմիկն ունի այդ շապիկն ու գողնոցը. բայց  
նա Մուկուչին բան չի կարող ասել. Մուկուչն  
ել դե ինչ կարող ե հասկանալ. ինչ կլինի, վոր  
իր կինը մեկ յերկու անդամ գնաւ աղայի վոտ-  
քերը լվանա:

Բայց բարելը հանդիստ չունի. նա գիտե,

վոր Արուսն այլիս չի գա, յեթե գա ել ելի ել  
չար լակոտը, Արմիկը պիտի խանդարի նը-  
րան... Ու նա զազազում ե, զազազում ե յեր-  
կու տարեկան յերեխայի դեմ... Յերեխան,  
վոր միայն ու միայն իր լացով ե պաշտպանում  
իր մորն աղայի հարձակումներից. և ինչ լավ  
պաշտպանեց, հը՝, թերեւս Մուկուչն ել այն-  
պես չկարողանար պաշտպանել իր կնոջը, ինչ-  
պես այդ յերկամյա տղան... ո՞չ, բարելը  
կես ճամբին մնացողներից չե... Առավոտ ե,  
նա գալիս կանդնում ե Արուսի քողարիկի առաջ  
ու համայական ասում.

— Եսոր հացը մոռացել են դաշտ տանել,  
ահա՛, զնա վերցրու են մեշոկն ու տար դաշտ,  
բրնձի ցանքերի դաշտը... Մարդդ ել ենտեղ  
ե, չուտ տար թե չե քաղցած են, գործն առաջ  
չի դնա:

Շոգ ե... Արուսը մեջքին ե գցում ծանր  
րեռը, վրան ել նստեցնում Արմիկին ու մեկ-  
նում ե դաշտը:

Գնում ե Արուսն ալման-ալման ծաղիկնե-  
րի միջով, զնում ե քրտնքակալած ու ծոված  
մեջքով, ուզում ե մի փունջ շինել են ծաղիկ-  
ներից իր Արմիկի համար, բայց սիրտը հան-  
դիստ չե... Բրնձի ցանքերը հեռու յեն.  
պետք ե զնա, վոր հասնի: Գնում ե նա կքած  
մեջքով, հետ են մնում ծաղկավետ դաշտերը,  
հասնում ե ճահճոտ հողերին, այնտեղ ուր

մոծակներն այնքան առատ են, և ուր արևն այրում ե թեժ յերկաթի նման։ Արուսը վերջապես հասնում է արդեն ճաշի ժամն ե։ Արուսը նախ մեջքից իջեցնում է Արմիկին, առաջ հացը տանում հանձնում է Բաբելի մշակներին։

Ու այսպես, Արուսը գնաց յեկավ մի քարի որ. միշտ ծանր բեռն ուսին, միշտ հետլով, միշտ քրտնելով։ Ու այդ շրջադաշտության մեջ ամենից վատն Արմիկի վիճակն եր. թեժ արևի տակ յերեխան նվազում եր, հեվում չնչասպառ ու հազիվ եր Արուսը նրան տուն հասցնում։ Յերեխան հետզհետե նվազում եր։ Մոծակները հանդիստ չելին տալիս թըշ վառ մանկանը. նա հաճախ ճշում եր ցավից, ճշում աղեկտուր, ինչպես այն որը Բաբելի ուղարկում։

Ու այսոր ել ահա՛, յերբ Արուսը կաշտ հասավ՝ յերեխան ճշում եր, ճշում եր սարսափելի ճայներով. հա ես ա յերեխան ճայն կլտրի, հա հիմի, հա քիչ հետո... բայց յերեխան չեր հանդարտվում. նա քրթմնջում եր, «ղեն» եր տալիս ու ել չեր պատասխանում Արուսի ժպիտներին։ Այժմ Արուսի ճայնն ել ե աղիողորմ հնչում. նա ել ե ճշում, խելազարթափով հարձակվում յերեխայի վրա, մաժում, գուրգուրում, բայց իզուր։

Յեվ Արուսի աղաղակների վրա մոտիկ

դաշտերից վազեցին հասան մի քանի տղամարդիկ և կանայք. վրա հասալ նաև ինքը՝ Մուկուչը, խլեց Արմիկին մոր ձեռքից և տեսավ, վոր յերեխան նվազել, թուլացել ե. — Զո՞ւր, զո՞ւր, — աղաղակեցին չորս կողմից։

Քիչ հետո ջուր հասցըին, արուեցին յերեխայի ճակատը, ուշքի բերին և պատվիրեցին նրան այլևս դաշտ չըերել։

— Դող ա, — յեղբակացըրին բոլորը։ Արուսը սպրտնեց ու ավելի սպրտնած Արմիկին սեղմեց իր կրծքին ու շտապշտապ տուն վերադարձավ. նրա յետեկից նայելով մնաց Մուկուչը՝ գլուխը հուսահատ տարուրերելով։

Չ  
Զթե շապիկ ու քաթանե գողնոց ունի Արմիկը։

Բայց Արուսն այլևս չի կարողանում առաջվա պես խնամքով ու գուրզուրանքով յերեխային հազցնել այդ զգեստները։ Այժմ միայն շապիկն ե Արմիկի հագին, իսկ գողնոցն ընկած ե քողտիկի մի անկյունում։

Արմիկը պառկած ե քողտիկի հատակին՝ խսիրի վրա և խորն ու անհանգիստ տնքում է. կայտառ դեմքը սպրտնել ե ու վճիտ աչքերը տենդի մեջ անձամբ դառնում են այս ու



այն կողմ : Արուսը կքած յերեխայի վրա, ներ-  
քին հուզումով ու սրտի հետզհետե ավելացող  
թրթիռով խոսում ե .

— Իմ բալա, իմ քաղցր բալա, բա յե՞րբ  
պիտի մեկ ել են աղոսնիկի դունդունոցու գո-  
ցես. հա՞ , իմ անուշ բալա:

Խոսում ե Արուսը յերկար ու յերկար,  
բայց Արմիկը չի արձագանքում, միայն մեկ-  
մեկ թույլ շարժում ե ձեռքնչը ու ելի թորշո-  
մած տերեւի նման գցում կողքին:

Մուկուչն ել տուն չի գալիս, վոր գոնե մի  
քիչ Արուսին սիրտ տա: Բարելլը նրան ուղար-  
կել ե սարն անասունների հոտերին հսկելու և  
Արուսն աչքը ջուր կտրած սպասում ե Մուկու-  
չին. հա եսոր կգա, հա եգուց :

Դուռը բաց անողն ել ե կտրվել. այսոր  
հազիվ հաղ Արուսը կարողացավ մի յերկու  
հարեանի տեսնել, խորհուրդ հարցնել, թե  
ինչ միջոցներով բժշկի Արմիկին, և այս ան-  
գամ ել Արուսի բախտը բանեց. իրիկունը նրա  
դուռը բացող յեղավ. յեկողը նա յեր, նա,  
վորի մասին ասել եյին հարեանները. ել ինչ  
դեղ ու զոխտուր, քանի վոր կար ինքը, Փի-  
րոզ նանը: Արուսը թոփէքով վոտքի կանգնեց:  
Ներս մտավ վաթսունի մոտ մի կին. չնայած  
ամառվա շոգին, նա հագին ուներ մի հաստ  
անթարի, գլխին փաթաթած եր մի մախ-  
մուր շալ, վորի տակից փայլում եր վոսկու

գեղին շաբանը: Վոսկու գեղին փայլի ովես  
գեղին եր պառափի աչքերի փայլը, նրա գեմքը  
նման եր չորացած ուռենու վոստի, վորի վրա  
փայտփորը փորփրել ե զանազան անցքեր և  
այդ անցքերը նրա վոս ընկած աչքերն եյին,  
ճոթուած ուռենգներն ու հաստ շրթունքներով բե-  
րանը, ուր ատամները հետ ու առաջ, յերկար  
ու կարծ և ամբողջովին գեղնած ու մղած  
գուրս ցցվեցին՝ յերբ նա մոտեցավ իր վոսկ-  
բացած ձեռքերը քսեց Արմիկի գեմքին ու նշա-  
նակալից շարժելով գլուխը, խոսեց.

— Դեյն ա տալի, հա՞ , — և ծպապցնելով  
շրթունքները զննական նայեց Արուսի գեմքին:

Արուսը գլուխը կախեց նրա սուր հայաց-  
քի դիմաց. նրա յերկյուղած սիրտը դարձյալ  
լցվեց վատ նախազզացումով: Փիրոզ նանի  
շարժվածքից ու կերպարանքից ամեն բանի  
հոտ դալիս եր, բացի կյանքից. ի՞նչ, ի՞նչ եր  
թաղնված նրա մեջ, վոր կարողանար կյանք  
ներշնչել Արմիկին . . .

Փիրոզ նանը իսկույն գործի անցավ. նա  
ծոցից հանեց մի քանի թղթեր, մի թաղրեհ,  
յերեք հատ գույնզղույն քարեր, մի սատանի  
յեղունդ, մի հատ սկլի ականջ և բոլորն հա-  
վաքելով բռան մեջ նախ մի քանի անդամ ձեռ-  
քը ողի միջով շրջագծեց հիվանդ յերեխայի  
շուրջը, ապա առարկաները գցեց հատակին և  
ստուգելով նրանց անկման դիրքը, փոխեց դեմ-

քի արտահայտությունը, վորից ավելի սարսափելի դարձան նրա աչքերի վայլը և նա ներքին տաղնապով բացականչեց.

— Ո՞չ, Հո, Հո... Ես ինչ ես արել այ ազ-  
չի:

Նրա տոնի մեջ այնպիսի սարսուցուցեչ  
շեշտ կար, վոր նույն տաղնապն անցավ Արու-  
սին և նա թողնելով հիվանդ յերեխային մո-  
տեցավ, ակնապիշ նայեց պառավին՝ որելով  
լսողությունը նրա հետազա խոսքերի համար:  
Փիրող նանը չարունակեց.

— Դու բարկացրել ես աստծուն. Պըա-  
համար ել յերեխայի պահապան հրեշտակը  
խոսվել ա գնացել ու հիմի չար սատանեն ա-  
րուն գրել յերեխի մեջ ու տանջում ա նրան... .

— Վայ իմ որին, վայ իմ խեղճ, իմ արգար  
բալին, — հեծկոտաց Արուսը և ուժեղ թափով  
ձեռքերը խփեց գլխին:

Այդ ավելի վոգեորեց Փիրող նանին:

— Զարը բարուն, բարին չարին. Ես ա  
աշխարի որենքը, — շարունակեց նա, — չարն հմի  
պինդ բուն ա գրել տղիդ մեջ. Համա բարին չի  
կորել աշխարից, բարին պիտի դուրս քշի եղ  
չարին...

— Բարին, բարին, — շշնջաց Արուսը և ա-  
ղաչական աչքերով նայեց պառավին:

— Հա, վոր բարին չարին հաղթի պտի  
թլիսմ անել. թլիսմ անելը հեշտ չի... Ա՛յ,

դրա համար հիմի կերթաս: Կերթա՛ս, կեր-  
թա՛ս կհասնես մի դռան. Եղ դուռը բաց կա-  
նես. բաց կանես ու ներս կմտնես. ենտեղ մի  
մարդ պիտի ըլի նստած. մարդը հասարակ  
մարդ չէիտենաս, ինքը կըլի մի հիսուն տարե-  
կան. աստվածավախ ու աստվածապաշտ մարդ  
ա. ընդրան տեսար թե չե կասես. «Տերն մեր  
Հիսուս-Քրիստոսի անունով աղաչանք ևմ ա-  
նում քեզ, վոր մի մազ տաս տանեմ թլիսմ ա-  
նեմ, յերեխիս չարը խափանեմ»— թե տեց  
«Տերն մեր Հիսուս-Քրիստոսի անունով, արի  
մազը տար յերեխիդ չարը խափանի»— զաթի  
կմոտենաս ու նրա դնչից մի սպիտակ մազ կը-  
սոլիս, կհանես. թե ձեն չհանեց զաթի քու-  
բախտը քեզ հետ՝ կթողաս յիտ կզաս:

— Ախր եղ տունն ու դուռը յիս վորդի  
դունեմ, — զվարած վրա բերեց Արուսը:

— Կմտնես հենց առաջին պատահած տու-  
նըն ու դուռը:

— Առաջի պատահած տունն ու դուռը, —  
մտածեց Արուսը, — ախր եստի մոտիկ, աղա-  
բարելի տանից ու դռնից սալիայի ուրիշը չկա:

— Ենտեղ ել կմտնես...

— Ենտեղ, — կմկմաց, Արուսը ու սարսուսը  
պատեց մարմնին, իսկ պառավը վրա բերեց:

— Եղ համ բոլորը չի. յեզնեն կերթաս  
յերկու հատ սպիտակ փորով փառեկ կճարես,  
վառեկները ժամի դռան մատաղ կանես. վորի

սալիտակ բմբուլներից մի-մի հաս կթաթիւնս  
իրենց արունի մեջ ու են մազի հետ կրերես...  
թե ասածս արիր, թլիսմը կսարքեմ ու տղեղ  
ընչանք ձեզը-ծեզի, ելի են առաջվա տղեն, ե-  
թի են առաջվա տղեն...»

— Յա տեր ասաված,— բացականչեց Ա-  
րուսը և մի պահ մնաց քարացած։ Նրա հեղին  
դեմքը շառագունված յերկյուղածության զգա-  
ցումից արտահայտում եր նրա հոգու ամբողջ  
ալեկոծությունը, նրա սիրան ավելի ուժգին  
եր թփրառում։ Նա հայացքը շուռ տվեց, նա-  
յեց նվազած յերեխային, վորն անխոս, դար-  
ձյալ յերբեմն միայն ձեռքերն եր թափահա-  
րում և ելի թուլացած մնում նույն վիճակում։  
Նա մոտեցավ շոյեց յերեխայի դեմքը, նայեց  
նրա կիսարաց աչքերին և փղձկաց... Մի՞թե,  
մի՞թե իրավ և նանի ասածը. միթե տղան կա-  
րող ե նորից կյանք առնել...»

— Դե չուստ, ինչ վոր ասեցի գնա արա.  
յես ել, ընչանք գալդ չարը կհանեմ նրանից.  
չարն որ հանեցի թլիսմը կկարեմ վրեն ու ել  
չարը նրան չի մոտենա, — ասավ պառավը և  
մագիլների նման իր ձեռքերը յերկարեց, Ար-  
միկին հանեց անկողնուց և գիրկն առավ։ Ա-  
րուսի սրտին այդ պահին իջավ քարի նման մի  
ծանրություն. պառավի բազուկները սղմում  
ելին յերեխային, հնար չկար նրան այլևս ա-  
ղատելու այնոեղից. պետք եր գնալ...»

Ե

Յեվ դարձյալ շարժվեց Արուսը, դարձյալ  
ուժ տվեց վոտքերին ու հասավ առաջին պա-  
տահած դուռը, Բարելի տան դուռը... Յեվ  
հրաշք, այստեղ ներսում նստած եր հիսունի  
մոտ մի մարդ, Արուսը մոտեցավ։ Մոտեցավ,  
բայց չեր ուզում հավատալ աչքերին. նստածն  
ինքը Բարելին եր... Ա՛հ, ուրեմն նա աստվա-  
ծավախ ու աստվածապաշտ մարդ ե յեղել,  
ինչպես, ինչպես չի իմացել Արուսը... Ախր  
վո՞նց դլախ չընկատվ, բա ել ուրիշ ո՞վ կտար  
Արմիկին չթե շապիկն ու քաթանե գոգնոցը. և  
Արուսը յերկյուղածությամբ ելի առաջ շարժ-  
վեց ու կմկմաց.

— Տերն մեր Հիսուս-Քրիստոսի անունով  
աղաւանք եմ անում քեզ, վոր մի մազ տաս  
տանեմ թլիսմ անեմ, յերեխիս չարը խափա-  
նեմ...»

Ասաց ու ավելացող հուզմունքով կանգ-  
նած մնաց. վայ թե չպատասխանի, հըօ, վայ  
թե բարկացած ե իր վրա, բայց վոչ, վոչ,  
բարին անպակաս ե աշխարհից։

Ահա խոսում ե բարի մարդը.

— Տերն մեր Հիսուս-Քրիստոսի անունով  
արի մազը տար յերեխիդ չարը խափանի։

Արուսի ուրախությանը չափ չկար, բայց  
ի՞նչպես մոտենար, ի՞նչպես պոկեր մազը,

ինչ լավ կլիներ, վոր հենց ինքը՝ Բարելը պո-  
կեր մազն ու տար, բայց Բարելը չեր շարժ-  
վում՝ թլիսմ եր, Արուսն ինքը պիտի պոկեր:

— Դե, արի տար, — լսվում է կրկին Բարելի  
ձայնը և Արուսը մոտենում է նրան. մոտենում  
է վախով, յերկյուղած, սակայն Բարելն այրես  
չի համ բերում. բռնում է Արուսի բազուկից,  
քաշում է դեսի իրեն ու դեմքը մոտեցնում է  
նրան: Արուսը զնում է նրա ծնոտը և սիրո  
չի անում մազը պոկել: Բարելն այս անգամ ա-  
վելի համարձակ է դառնում . . . Ա՛յ, յեթե այն  
որը Արմիկը ձայնը չցցեր Արուսը բավական  
մտերժացած կլիներ և հիմա համարձակ կպո-  
կեր մազը, այս է ասում Բարելի հայացքը:  
Այժմ ժամանակն է, վոր Արուսը մտերժանա  
Բարելի հետ: Բարելը քաշում է նրան դարձյալ  
դեսի թախար, դարձյալ նրա հայացքն ունի  
նույն վախաչոտ արտահայտությունը. ահա՛,  
այժմ այլևս նրան չի խանգարի Արմիկը. այդ  
չար ու անպիտան յերեխան, այլևս բնավ-բնավ  
չի կարող միջամտել. արդեն վաղն ամեն ինչ  
վերջացած կլինի և Արուսն հսկող աչք չի ու-  
նենա, — այս է անցնում Բարելի մտքով:

Արուսն զգում է, վոր ինչ վոր վատ բան է  
կատարվում իր հետ, սակայն չի կարող դիմա-  
դրել, չե վոր այն չարաբաստիկ որից հետո Ար-  
միկն հիվանդացավ: Արուսն ինքնամոռացման  
մեջ միայն զգում է չար ու տանջող հպումներ,

չոյանք, սակայն նրա փակված աչքերի առաջ  
միայն ու միայն Արմիկի պատկերն է յերե-  
վում. Արմիկը, նրա հույզերի ու մտքերի հան-  
գրվանը, նրա արգանդի ծնունդը, նրա շունչն  
ու կյանքը, իր մտերիմն ու հարազատը. ո՛հ,  
ինչ լինում է լինի միայն ինքը շուտ, շուտ  
տուն գնա, վերցնի Փիրոզ նանի ձեռքից յերե-  
խային ու սեղմի կրծքին. . . Այս մշուշոտ մըտ-  
քերի մեջ նա չի զգում հետզհետե կատաղի  
դարձող հպումներն ու շոյանքը. . . Նա միայն  
այն է զգում, վոր քիչ հետո իր մատները  
խառնում են ինչ վոր կոշտ բան, ապա աջ  
բթամատի ու ցուցամատի արանքում մնում է  
մի ճերմակ մազ. . .

Վերջացավ, վերջացավ առաջին զժվար  
գործը. ահա այն մազը, վորով պիտի չարը  
գուրս վանի իր սիրեցյալ մանկիկի միջից. . .  
Բայց նա վարանած է. . . Նրան հարկավոր է  
յերկու վառեկ. . . Վո՞րտեղից, ումնից վերց-  
նի. . . Ինքը վառեկ չունի, իսկ ուրիշից գնե-  
լու համար փող է պետք. . . բայց դարձյալ բա-  
րին պակաս չի աշխարհից, նրա վարանումից  
Բարելն հասկանում է, թե բանն ինչումն է.  
Թույլ է տալիս նրան հավաքնից վերցնել յեր-  
կու վառեկ. . .

Արուսն ուրախացած դուրս է վաղում և  
ճամբին հանդիպելով Մուկուչի ընկերներից  
մեկին, յեկեղեցու դռան շեմքին մորթել է

տալիս վառեկները և վերցնելով յերկու արնու-  
տած ձերմակ բմբուլ, տուն եւ վազում խելա-  
դար թափով:

2

Փերող նանն Արմիկը գրկին եր սեղմել,  
յեր Արուսը տանից դուրս յելավ. հետո նա  
յերեխային կրկին դրեց հատակին, մի քանի  
անգամ քողաթիկում դնաց, յեկավ, չարախինդ  
դեմքը շուռ տվեց դեպի դուռը և յեր Արուսն  
արդեն հասել եր Բարելի դուռը քահ-քահ խըն-  
դաց:

— Վայ, Բարել վայ, — մրմնջաց պառավն,  
ապա յուբովի չարունակեց, — թե ես անդամ ել  
խոսքը չի կատարել, թե ես անդամ ել են  
մեծ մեծ ծծերով կովը չի ղարկել գոմո, յես  
դիտեմ ու յես: Մի ենակես թլիսմ անեմ, վոր  
են անտեր չոնթը կապ ընկնի ու իր կնկա հա-  
խիցն ել չկարենա գա, ուր մնաց, թե աչքը  
տնկի Արուս-Մարուսի վրա:

Ասաց և իր բարկությունն ինչպես րոց,  
վոր լափել եւ ուզում իր ըրջապատը, ուզեցավ  
թափել յերեխայի վրա:

— Զեներ ես հանում, հա՞ , մորդ պշտ ես  
կանգնում, հա՞ , — քրթմնջում ենա կատաղած  
և իր չորացած մատներից կազմած բոռնքք-  
ներով զարկում եր յերեխայի րաց կրծքին...

Այ քեզ, այ քեզ, — դե հիմի ել ճվա ե, հիմի  
ել:

Յերեխան հեռում եր կամաց և հետզհետե  
սպառվող չնչով, սակայն Փիրոզ նանի դաժան  
հարվածները չեյին դադարում: Մերթմերթ,  
յերբ նրա ականջին եր հասնում մի կասկածելի  
ձայն, վոր հաճախ իր չարժումներից առաջա-  
ցած խշոցն եր, նա հարվածների փոխարեն  
խաչակնքում եր յերեխային և բարձր ու շտապ  
կրկնում.

— Յա խնդիր-կատար աստվածածին, դու  
չարին հանես ես երեխիցը. յա սուրբ Հիսուս  
դու սատանին հեռու քշես ես խեղճ մինուճա-  
րիցը:

Եեվ ապա դարձյալ դործի յեր զցում չոր  
ու չարկամ բոռնցքները: Եեվ այդ այնքան  
ժամանակ, մինչև արյունը խփեց յերեխայի  
դեմքին և նրա դալուկ դեմքը կարմրեց ու քըր-  
տինքը ծլուլ-ծլուլ դուրս բողբոջելով մարմը-  
նից՝ թրջեց նրա նոր չապիկը:

Փիրոզ նանը գոհ վոտքի կանգնեց. դուռը  
կիսաբաց արավ ու նայեց դեպի Բարելի ողան.  
բակում վոչ վոք չկար:

— Եհ, յես տնպա՞հ եմ, ի՞նչ ա: Լավ ա՞ ,  
դանջն ենտեղ քեֆ հասցնի՞ յես եստեղ նրա  
ցավը քաշեմ. մինչըռու յե՞րբ...

Ասավ նա ու կատաղած գնաց յեկավ սեն-  
յակում:

— Ա՛, ա՛, ա՛,— վերջապես ձայն տվակ  
յերեխան, կարծես սթափված և նոր զգալով  
հարվածների ցավը, վոր մինչ այդ նա տա-  
քությունից կիսառշաթափ վիճակում չեր  
զգացել:

— Հա՛, ելի հոգեվրա՛ր, — կատաղեց նա-  
նը և այս անգամ ավելի պինդ, ավելի անո-  
դորմ եյին նրա հարվածները յերեխայի մատ-  
դաշ փխրուն կրծքին, կողերին, դեմքին ու  
դիմին:

— Մա, մա, — ճչում եր մանկիկն աղիո-  
դորմ և այդ աղաղակն ավելի յեր բորբոքում  
նանին:

— Ա՛, ա՛, ա՛... — հետզհետե թուլանում  
եր յերեխայի ձայնը...

Յեվ այն պահին, յերբ յերեխան վիզը  
ծուած, կիսաբաց աչքերով, այլևս անկարող  
եր անդամ ձայն հանել, Փիրոզ նանը մի վեր-  
ջին հարված հասցըրեց նրա կրծքին և զգալով  
Արուսի մուտքը հապճեպով խաչակնքեց և  
յերկյուղած դեմքով սկսեց:

— Յա, սուրբ տեր, մեծ ա քու զորությու-  
նը. ինչ կարմրել ա բալես. ինչ պլուլ-պլուլ  
քրտինք ա դուրս թափել... Ես ա, ես գիշերն ել  
լուսանա ելի են տղեն, ելի են տղեն... Յա  
սուրբ զորություն դու չարին, սատանին ել  
ներս չթողնես:

Արուսը թափով յեկավ ընկավ յերեխայի

վրա, տեսավ, վոր իրոք նա կարմրել ե ու քըր-  
տինքը պլուլ-պլուլ սփովել ե ձակատին. նա  
կարծես ինչ վոր ծանրությունից թեթևացած  
հոգոց հանեց և փաթաթվեց Արմիկին:

— Իմ ազիզ բալա, իմ լավ բալա... բա  
ես ի՞նչ ա, ինչի հեջ ձեն չի հանում... Հը,  
Արմիկ... իմ որ ու ումբը... դեմի առւ ել ա-  
բա, հը... ես ինչ թրջվել ա շապիկը...

Մինչ այդ Փիրոզ նանը, վոր վերցըրել եր  
Արուսից մազն ու բմբուները՝ տեղավորեց մի  
յեռանկյունի կանաչ գույն փոքրիկ չորի մեջ,  
ապա զգեստի ծալքից զուրս քաշելով մի ասեղ  
կարեց, հետո հանդիսավոր խաչակնքեց և  
պատրաստի թալիսմանն ամրացրեց յերեխայի  
շապիկին՝ կրծքի աջ կողմից. Սակայն նկատե-  
լով Արուսի անհանգիստ վիճակը դարձավ դե-  
պի նա.

— Դե հիմի յերեխին դինջ թող. չարը  
խափանված ա. Հմի արդեն մութն ընկավ. ըն-  
չանքի լուս յերեխին թարժաժ չանես, լուսուն  
ելի են տղեն ա, ելի են տղեն:

¶

Արմիկը չթե շապիկ ունի ու քաթանե գոգ-  
նոց: Քաթանե գոգնոցը խոռված ընկած ե մի  
անկյունում ու շապիկն այլևս չունի այն հրա-  
պույրը ինչ առաջին որը: Արմիկը տնքում ե  
խորն ու անհանգիստ:

Ամբողջ գիշերն ու հետևյալ ցերեկը Արու-  
սը պառկած է Արմիկի կողքին և անընդհատ  
չոշափում է նրա մարմինը, ճակատը: Դեմքը  
մոտեցնում է նրա բերանին, զգում է նրա  
թույլ չնչառությունը: Քրտինքը չորացել է,  
անցել է յերեխայի դեմքի վառ կարմրությու-  
նը և ձեթի ճրագի աղոտ լույսի տակ ավելի  
արտահայտիչ է յերեխայի դալկությունը:

Հապա ել ինչո՞ւ համար եր այն բոլորը,  
Հապա ինչո՞ւ համար եր Փիրող նանի հավաս-  
տիացումները: Միթե դարձյալ չարը հետ կա-  
ցավ, միթե ինքը վորեն բան սխալ արալ,  
Հա՞... նա փաթաթվում է յերեխային, գըր-  
կում հանում է անկողնուց, սկզբում կըծքին,  
մայրական ջերմ շունչը սփռում է նրա վրա,  
թվում է թե ցանկանում է լրացնել նրա սպա-  
ռող շունչն իր չնչով, թվում է թե ճգտում է  
հանել իր միջից կյանքն ու մերել իր Արմի-  
կին...

Փամերն անցնում են:

Յերեխան անընդհատ հեռում է և այս ան-  
դամ հեռցն ավելի թույլ, ավելի նվազկոտ  
և դառնում...

— Արմիկ, Արմիկ, — հուսահատ ճշում է  
մայրը, և վոստյուններով հետ ու առաջ դը-  
նալով դեմքը հպում է յերեխայի սառչող դեմ-  
քին, համբուրում է նրա այտերը, չըթունք-  
ները, բերանը, և թվում է թե ուզում է կեն-

դանություն տալ նրա սառած մարմնին՝ իր  
հրաբուրով հուզմունքով, իր աղեկտուր ձի-  
չերով:

Սակայն հնար չկա. Կյանքը խուսափում է  
Արմիկից, և Արուսը վերապրում է դարձյալ  
այն ըովեները ինչ ինքը գործադրեց յերեխա-  
յի վրկության համար: Յեվ այդ ամենի մեջ  
նրա աչքերի առաջ ցցվեցին Բարելն ու Փիրող  
նանը... Հա՛, հիմա արգեն ինչ վոր բան է  
հասկանում Արուսը... այստեղ... ոդան, Բա-  
րելը... մազը... բայց ի՞նչպես, ինչո՞ւ հա-  
մար նա ստացավ այդ մազը: Նա բորբոքվում  
է, ցանկանում է յերեխան վայր դնել, վազել  
այստեղ, բայց վոչ, ինչու վայր դնել... հենց  
այդպես, յերեխայի հետ... յերեխան այն որը  
դուք չեկավ Բարելին և Արուսը յերեխան գըր-  
կին՝ գզզպված մազեցով դուրս ե յելնում  
բակ... նա ինքնամուացման մեջ հասնում է  
բասմային, այնտեղ, ուր ինքը Բարելից ըն-  
դունեց շապիկն ու գողնոցը... Արուսը հիմա  
հասկանում է, շատ բան է հասկանում...

Ո՞հ, Բարելը, նա նույնիսկ իր մազը չխնա-  
յեց յերեխայի համար... Հա-հա-հա, — խելա-  
գար մոնչյունով ծիծաղում է Արուսն և ավելի  
վճռական քայլերով կտրում, անցնում է բա-  
կը, և իրեն գցում Բարելի ոդան:

Ահա՛, մի հաճոյալից ժպիտ պարում է  
Բարելի դեմքին: Նույնքան հաճոյալից է Փի-

բող նանի ժպիտը . . . ինչ խոսք՝ նրանք ուրախ,  
չառ ուրախ են, վոր չարը հանել են Արմիկից:  
Ահա՛ այդ թալիսմանը, վոր կպած ե յերեխա-  
յի շապկից՝ իր մեջ ե ամփոփել այն բոլոր բա-  
րերը ինչ տվին Բարելն ու Փիրող նանը:

— Հա-հա-հա:

Կրկին մի գառն ու հեղնախառն քրքիջ աղա-  
վազում ե Արուսի դեմքը. նա յերեխան տա-  
նում դնում ե թախտին:

— Ահա՛, նա ել ձայն չի հանում. նա ել չի  
խանդարի վոչ վոքի. դե հայդե՛ դուրս,  
դուրս, Փիրող նան . . . Արուսն ուզում ե Բարելի  
վոտքերը լվալ . . . Հա-հա-հա:

Բարելն ու Փիրող նանը նշանակալից իրար  
են նայում: Արուսի շաղված աչքերը, բորբո-  
քուն դեմքը, համարձակ խոսքերը տարորինակ  
են, Փիրող նանը շատապ մոտենում ե յերե-  
խային և գլուխը կախ հետ ե գառնում:

— Հը թալիսմանը, թալիսմանը,— բացա-  
կանչում ե Արուսը և կատաղի թափով հար-  
ձակվում, քաշում ե Փիրող նանի մազերից ու  
նրան թավալում ե գետնին:

Պառավը սարսափով բռնված բացական-  
չում ե:

— Բռնեցե՛ք, բռնեցե՛ք . . . Բարել բռնիր  
սրան, չարն յերեխից յելել, մտել ա մոր մեջ . . .  
բռնիր Բարել, բռնիր . . .

Յեկ սակայն Արուսը վոչինչ չի լսում. կա-

տաղած ու կբակված եյությամբ նա հարվա-  
ծում ե Փիրող նանին, առանց իմանալու թե  
ուր ե դիմչում հարվածը:

— Զարը, չարը,— բացականչում ե Բա-  
րելը և ուզում ե ոգնության հասնել Փիրող  
նանին . . .

Այդ պահին Մուկուչը վրա յե հասնում:

Մի վայրկյան Մուկուչը լուռ նայում ե  
գաղաղած կնոջը, հետո թախտին դրված դի-  
ակնացած Արմիկին, նայում ե անվճռականո-  
րեն կանգնած Բարելին ու չգիտե անելիքը.  
այդ պահին Փիրող նանն արդեն խռոսում ե  
մահամերձի խռոսով: Արուսը մի պահ զվար-  
թացած հետ ե գառնում և նկատելով Մուկու-  
չին՝ սկսում ե.

— Ահա՛, իմ Արմիկն հիմի չթե շապիկ ու-  
նի ու քաթանե զողոց. աշխարհից բարին ան-  
պակաս ա . . . Հա-հա-հա . . . ինչի յես յեկել  
Մուկուչ. . . գնա, գնա, թող վոր յես Բարելի  
վոտքերը լվամ . . . տես Արմիկն ել սավել ա . . .  
նա հիմի ել չի խանդարի Բարելին . . .

Մուկուչն ել հասկացավ, ամեն ինչ հաս-  
կացավ և նույն կատաղությամբ ինչ քիչ ա-  
ռաջ Արուսը՝ թուավ ու բռնեց Բարելի կոկոր-  
դից . . .

— Զարը, չարը,— գոռում ե Բարելը և  
նրա ձայնի վրա ողան են լցվում գյուղացինե-  
րը, — չարը, չարունակում ե Բարելը բռն ա

դրել եղ մարդ ու կնկա մեջ...դո՞ւրս, դո՞ւրս  
նրանց գեղից, դուրս աշխարհից ու արևի տա-  
կից...

Բայց Մուկուչի անվրեալ հարվածների տակ  
Հետզհետե նրա ձայնն ել նվազում ե...

\*\*\*

Լոեց Մուկուչ բիձան... լոեց, կարծես ա-  
սելիքը վերջացավ: Ներկա յեղողները բոլորը  
դլուխները ափառանքով տարութերեցին:

— Ե՛հ, Մուկուչ բիձա, — ասեցի յես, — Հի-  
մա յեմ համկանում, թե ինչու եղան շուտ են  
ճերմակել մազերդ:

— Զանդ սաղ ըլի, եսպես ել լավ ա, — ա-  
ռեց նա և ցույց տալով գեղի ներս մտնող  
մի քաջառողջ յերիտասարդ ասավ, — ծանօթա-  
ցի՛ր, աղես ա, մեր գեղի ել համայնական  
տնտեսության նախադահն ա. յես ել պակասը  
չեմ հա՞մ, առաջի կարգի դաշտավար եմ:

— Արմիկ, — ձեռք յերկարելով ինձ ասաց  
յերիտասարդը:

— Արմիկ, — շփոթվեցի յես: Այդ ինչ-վոր  
չեր համապատասխանում Մուկուչ բիձայի  
պատմությանը:

— Հա, ընկերոջս վոր ասեմ, — նկատելով  
իմ վարանումը վրա բերեց Մուկուչ բիձան, —  
եղ դեպքից հետո, յեկան ինձ ու Արուսին մի  
հինգ տարով բանտ տարան, վոր չարը խա-  
փանեն մեր միջից... Փառք աստծու, «չարը»

խափանվեց, — հեղնանքով ասաց նա վերջին  
խոսքերը և ապա զվարժորեն ավելացրեց, —  
նրանից հետո լուս աշխարհ ելանք, ելի չալիշ  
եկանք, ելի տանջվանք. մի տղա ել ունեցանք,  
առաջի տղիս հիշատակին սրա անումն ել Ար-  
միկ դրինք... ժամանակ եր, անցավ, աշխար-  
հը փոխվավ, տղես բոյ քաշեց, մենք ել մարդ  
դառանք:

— Հապա Արո՞ւսը:

— Նա ել մեր համայնական տնտեսու-  
թյան լավ կովկիթներից ա:

— Սքանչելի... չգիտեյի ինչ ասեմ յես:

— Հա, սքանչելի բաներ գհա շատ կան,  
թե մին ել գաս քեզ կպատմեմ «Յերկճյուղ  
մազի» ու Արևաշենցի Յենովք բիձայի պատ-  
մությունը: Նրա պատմությունն աշխարհում  
մին հատ ա... գիտեմ, գրող մարդ ես, քեզ  
պետք կգա...



ՀՀ Ազգային գրադարան



NL0362952

456

55359

4116 43 409.